

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԽՈՍՔԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նինա Իշխանի Մարգարյանի «Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի՝ որպես ազգային անվտանգության հիմնարար տարրերից մեկի զարգացման առանձնահատկություններին՝ քաղաքական գործոնների ազդեցության համատեքստում:

Թեմայի արդիականությունն ակներև է, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը բախվեց այդ թվում նաև քաղաքական գործոններով պայմանավորված մի շարք մարտահրավերների կապված տարածաշրջանային տրանսպորտային նախագծերին ինտեգրման, ինչպես նաև ներքին տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացման հետ: Նշվածն անհրաժեշտություն է առաջացնում մանրամասն ուսումնասիրել այն քաղաքական գործոնները, որոնք պայմանավորել և շարունակում են ազդել ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացման առանձնահատկությունների վրա՝ կանխատեսելու և կանխելու այդ գործոնների ազդեցության հետևանքով առաջացած ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերները:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ ներկայացված ատենախոսությունն առաջին համապարփակ ուսումնասիրություններից է, որի շրջանակներում ուսումնասիրվել է Հայաստանի տրանսպորտային համակարգի կայացումը և զարգացումը՝ սկսած ԽՍՀՄ շրջանից, վեր են հանվել այդ գործընթացների քաղաքական գործոնները, որոնք պայմանավորել են նշված համակարգի ներկայիս վիճակը և խնդիրները: Այսպիսով, ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել դուրս գալ տրանսպորտային-լոգիստիկ համակարագի և դրա հետ կապված խնդիրների և գործընթացների դիտարկման դասական՝ տնտեսակենտրոն մոտեցումից, և անցում

կատարել դեպի քաղաքական գործոնների վերհանում, որոնք անմիջական ազդեցություն ունեն ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի վրա:

Կարող ենք արձանագրել, որ ատենախոսությունում լիարժեք կատարվել են հետազոտության նպատակից բխող խնդիրները, ինչը հեղինակին թույլ տվեց ձևակերպել գիտատեսական և կիրառական նշանակություն ունեցող եզրահանգումները:

Ատենախոսության շրջանակներում առանձնացված հետազոտական խնդիրները ներկայացված են տրամաբանական հետևողականությամբ և գիտական հիմնավորվածությամբ: Աշխատանքը շարադրված է գիտական, գրագետ լեզվով, ունի հստակ կառուցվածք և հանդիսանում է հեղինակային ինքնուրույն, ամբողջական հետազոտություն: Ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել է բավականաչափ գիտական գրականություն, ինչպես նաև պատմական նշախանություն ունեցող փաստաթղթեր և սկզբնադրյուրներ:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղյուրների ու գրականության ցանկից:

Առաջին գլխում վերլուծվել են «տրանսպորտային-լոգիստիկ համակարգ» հասկացության սահմանմանը վերաբերվող հիմնական մոտեցումները և այդ հարցում առկա խնդիրները, հիմնավորվում է այն թեզը, որ պետության տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացման աստիճանն անմիջական ազդեցություն ունի երկրի քաղաքական, սոցիալական և մի շարք այլ ոլորտների զարգացման վրա, ինչպես նաև այն պնդումը, որ տվյալ համակարգը՝ որպես ազգային անվտանգության հիմնարար տարրերից մեկը, անհրաժեշտ է դիտարկել նաև քաղաքան գործոնների ազդեցության տեսանկյունից, այլ ոչ միայն տնտեսական պրիզմայի ներքո:

Երկրորդ գլուխը նվիրված է ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի ձևավորման և զարգացման, ինչպես նաև աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության վերլուծությանը ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի ներկայիս վիճակի վրա: Ուսումնասիրվել է Հարավային Կովկասի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի զարգացման առանձնահատկությունները ԽՍՀՄ ժամանակաշրջանում, վերլուծվել տվյալ փուլում առաջացած ՀՀ տրանսպորտային-լոգիստիկ համակարգի հիմնական խնդիրները և դրանց պատճառները: Ներկայացվել է Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի կառուցվածքը և զարգացման գործընթացի առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքական և աշխարհաքաղաքական

գործոնների ազդեցությունն այս գործընթացի վրա: Կատարվել է Հայաստանի Հանրապետության ռազմավարական փաստաթղթերի համեմատական վերլուծություն, վեր է հանվել տրանսպորտային համակարգի որպես ազգային անվտանգության հիմնարար տարրերից մեկի ընկալման մոտեցումների վերափոպումը:

Երրորդ գլխում դիտարկվել է միջազգային տրանսպորտային-լոգիստիկ նախագծերին ՀՀ ինտեգրման քաղաքական գործոնները, ինչպես նաև վերլուծվել ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող և Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ համակարգի վիճակի վրա անմիջական ազդեցություն ունեցող հիմնական մարտահրավերները՝ Հարավային Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

Եզրակացության շրջանակներում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացվել են եզրահանգումներ և գործնական որոշ առաջարկներ:

Ատենախոսությունը, բնականաբար, զերծ չէ որոշ բացթողումներից և վիճակարույց դրույթներից: Առանձնացնենք դի քանիսը.

- Ատենախոսության հեղինակն աշխատանքի շրջանակներում բազմիցս նշում է Հարավային Կովկասում ազդեցության գոտիների վերաբաշխման և որոշ միջազգային դերակատարների կոմից ազդեցության ոլորտի ընդլայնման փորձերի մասին: Հետևապես, աշխատանքի շրջանակներում նպատակահարմար կլիներ ներկայացնել թուրքիայի՝ որպես Հարավային Կովկասում հիմնական դերակատարներից մեկի, տրանսպորտային ռազմավարության ընդհանուր բնութագիրը, քանի որ թուրքիան այսօր ակտիվորեն օգտագործում է տրանսպորտային գործոնն իր աշխարհաքաղաքական ազդեցությունն ընդունելու նպատակով:

- Ատենախոսության շրջանակներում (մասնավորապես՝ երրորդ գլխում) բավականաշափ կերպով ներկայացված չէ նաև Վրաստանի դիրքորոշումը Հայաստանի, Աղրբեջանի և Թուրքիայի միջև հաղորդակցությունների ապաշրջափակման վերաբերյալ: Սա կարեոր է այն առումով, որ Վրաստանի տրանզիտային դերը մասամբ պայմանավորված է նաև Հայաստանի, Աղրբեջանի և Թուրքիայի միջև տրանսպորտային հաղորդակցության բացակայությամբ, և ապաշրջափակման գործընթացը կհանգեցնի Վրաստանի տրանզիտային դերի նվազեցմանը, ինչը կարող է բացասական ազդեցություն թողնել և տնտեսության, և աշխարհաքաղաքական ազդեցության աստիճանի վրա:

- Ատենախոսության երրորդ գլխում արտացոլված են Հարավային Կովկասում տրանսպորտային հաղորդակցությունների հարցում Իրանի, Հնդկաստանի, Թուրքիայի և մի շարք այլ երկների շահերը: Սակայն միջազգային ասպարեզում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների ֆոնին կարևոր է նաև դիտարկել Չինաստանի գործոնը, որը ձգտում է ընդլայնել իր ներկայությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում, մասնավորապես՝ խորացնելով համագործակցությունը տրանսպորտային ոլորտում: Այդ իսկ պատճառով նպատակահարմար կլիներ արտացոլել նաև Չինաստանի ներգրավվածության աստիճանը տարածաշրջանային տրանսպորտային նախագծերում՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի դերակատարությունը Հարավային Կովկասում:

Նշված դիտողություններն ու առաջարկները հիմնականում արվում են գիտական քննարկումը խորացնելու նպատակով և չեն նսեմացնում հեղինակի կատարված աշխատանքի արժեքն ու գիտական նշանակությունը:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, շարադրանքի տրամաբանությունն ու ներքին ամբողջականությունը, եզրահանգումները՝ գտնում եմ, որ Նինա Իշխանի Մարգարյանի «Հայաստանի տրանսպորտային-լոգիստիկ զարգացման քաղաքական չափումը ազգային անվտանգության ապահովման համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 մասնագիտությամբ գիտական աստիճան հայցելու համար ՀՀ ԲԿԳԿ սահմանած պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի՝ կրթության և գիտության գծով տեղակալ՝

ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ, ք.գ.դ., պրոֆեսոր  S.S. ՔՈՉԱՐՅԱՆ

Պրոֆեսոր Տիգրան Քոչարյանի ստորագրության խորհրդական հաստատում եմ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտական խորհրդի քարտուղար՝ հոգեբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԶՈՒ պահեստագործ գնդապետ

Զ.Դ.ԱՍԱՏՐՅԱՆ

08.01.2026թ.